«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի պաշտոնակատարի
10.03.2020թ. թիվ 165 Հ/Կ հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ (ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ) ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից
Արձանագրություն թիվ 2, 27.02.2020թ.

ՎԱՆԱՁՈՐ
2020 թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կանոնակարգը մշակվել է համաձայն «ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ կետի, ՀՀ Կրթության և գիտության նախարարի՝ 21.07.2010թ. № 1167-Ն «ՀՀ-ում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանում կրեդիտային համակարգի ներդրման մասին» հրամանի և հրամանի հավելվածի, ՀՀ կառավարության 25.02.2016թ № 238-Ն հրամանի և հրամանի հավելվածի, 13.04.2017թ. թիվ 371 «ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հուլիսի 21-ի № 1167-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» հրամանի և հրամանի հավելվածի:

2. Սույն փաստաթուղթը սահմանում է Վանաձորի Հ.Թումանյանի անվան համալսարանում (այսուհետ՝ Համալսարան) հետազոտողի գիտակրթական ծրագրով ասպիրանտուրայում (առկա, հեռակա) և հայցորդության հիմունքներով ուսումնառության և գիտահետազոտական աշխատանքի կազմակերպման և իրականացման կանոնակարգը:

3. Ասպիրանտը բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող անձ է, որը սովորում է ասպիրանտուրայում՝ տեսական մասնագիտական գիտելիքները խորացնելու և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն պատրաստելու, իսկ հետազոտողի հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի առկայության դեպքում՝ նաև համապատասխան որակավորման աստիճան ստանալու համար[1]:

4.Հայցորդը բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող անձ է, որը բուհին կամ կազմակերպությանը կից պատրաստում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն[2]:

II. Ասպիրանտուրայում/հայցորդության համակարգում ուսուցումը

5. Ասպիրանտուրայում ուսուցումն իրականացվում է առկա և հեռակա ձևով, անվճար և վճարովի հիմունքներով: Առկա ձևով ուսուցման տևողությունը չի գերազանցում 3 տարին, իսկ հեռակա ձևով ուսուցման տևողությունը՝ 4 տարին:

6. Հայցորդությունը Համալսարանում իրականացվում է վճարովի հիմունքներով, տևողությունը չի գերազանցում 5 տարին:

7.Ասպիրանտուրայում/հայցորդության համակարգում ուսուցման լրիվ ծանրաբեռնվածությունը համարժեք է 180 ECTS կրեդիտային միավորի: 1 ECTS կրեդիտը համապատասխանում է հասանողի 30 ժամ, 180 կրեդիտը՝ 180 x 30 ժամ=5400 ժամլրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ծանրաբեռնվածությանը:

8. Ասպիրանտը ուստարում պետք է ունենա.

- 60 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն առկա ուսուցման համակարգում (10% թույլատրելի շեղումով),
- 45 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն հեռակա ուսուցման համակարգում (10% թույլատրելի շեղումով),
- 36 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն հայցորդության համակարգում (10% թույլատրելի շեղումով):

---

[1] ՀՀ ԲՈՀ. ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողով, տեղեկագիր 18, Երևան, 2015, էջ 35:
[2] Նույնը, էջ 36:

9. Ուսման բարձր առաջադիմություն ունեցող ուսանողը որոշ դեպքերում սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ բեռնվածություն՝ կիսամյակային կրեդիտների 10%-ի չափով:

10. Ասպիրանտի/հայցորդի գիտական ղեկավար, որպես կանոն, կարող է լինել Համալսարանում աշխատող գիտությունների դոկտորը կամ ԲՈԿ-ի կողմից թույլտվության դեպքում՝ գիտությունների թեկնածուն: Անհրաժեշտության դեպքում գիտական ղեկավար կարող է նշանակվել այն բուհում աշխատող գիտությունների դոկտորը կամ թեկնածուն, որտեղ կան համապատասխան մասնագետներ: Մեկ գիտական ղեկավար կարող է միաժամանակ ունենալ հինգից ոչ ավելի ասպիրանտ և հայցորդ:

III. Հետազոտողի կրթական ծրագրի կառուցվածքը

9. Հետազոտողի պատրաստման կրթական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) բաղկացած է երկու փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական, որոնց բովանդակությունը ներկայացված է աղյուսակ 1-ում[3]:

Աղյուսակ 1. Հետազոտողի պատրաստման ծրագրի բաղադրիչները

	Բաժինների և դասընթացների անվանումներ	Կրեդիտ
	Կրթական բաղադրիչ	**50**
ՊԴ.00	**Պարտադիր դասընթացներ և քննություններ**	**30**
ՊԴ.01	Մասնագիտություն. ատենախոսության թեմայի թվանիշով	8
ՊԴ.02	Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն	4
ՊԴ.03	Մասնագիտական օտար լեզու	4
ՊԴ.04	Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ	4
Պ.00	Պրակտիկա[4]	10
ԸԴ.00	**Ընտրովի դասընթացներ և ստուգարքներ[5]**	**20**
	Հետազոտական բաղադրիչ	**130**
ՀԱ.00	Ատենախոսության թեմայով հրատարակված անհրաժեշտ նվազագույն աշխատություններ[6]	30
ՏԱ.00	Տարեկան ատեստավորումներ	20
ԱԴԵ.00	Ատենախոսություն[7] և թեմա հաստատած հիմնարկի դրական եզրակացությունը ատենախոսության վերաբերյալ	80
ԸՆԴՀԱՆՈՒՐ		180

10. Ծրագիրը իրականացվում է համաձայն ասպիրանտի/հայցորդի անհատական ուսումնական պլանի (*հավելված 1*)՝ ավարտական պահանջներում սահմանված դրույթների պահպանմամբ:

---

[3] Հավելված ՀՀ ԿԳՆ 13.04.2017 № 371-Ն հրամանի:

[4] 6-ամսյա աշխատանքային ստաժ ունեցող ասպիրանտն իր ցանկությամբ կարող է չմասնակցել պրակտիկային և կրեդիտներ կուտակել՝ ներկայացնելով աշխատանքի վայրից համապատասխան տեղեկանք:

[5] Ասպիրանտների կողմից ընտրովի դասընթացների ընտրությունը կատարվում է համապատասխան ստորաբաժանման (ֆակուլտետ, ինստիտուտ, կենտրոն) գիտական խորհրդի կողմից հաստատված դասընթացների ցուցակից:

[6] «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» կանոնակարգի 10-րդ կետով սահմանված:

[7] Ատենախոսության 80 կրեդիտը ասպիրանտը ստանում է գիտական աստիճան շնորհելու մասին դրական որոշման դեպքում:

11. Ուսումնառության առաջին կիսամյակի սկզբից 10-օրյա ընթացքում ասպիրանտը/հայցորդ իր գիտական ղեկավարի հետ համատեղ լրացնում է իր ուսումնահետազոտական աշխատանքներ անհատական պլանը, որտեղ հերթականությամբ, ըստ տարիների, նշվում են ծրագրի ուսումնակա դասընթացները և հետազոտական բաղադրիչով նախատեսած աշխատանքները՝ համապատասխա կրեդիտներով:

Անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր կիսամյակի սկզբում ասպիրանտը/հայցորդը կարող կատարել ուղղումներ և շտկումներ իր անհատական ուսումնահետազոտական պլանում՝ նախապե ստանալով իր ղեկավարի և ամբիոնի վարիչի համաձայնությունը:

12. Ծրագրի կրթական բաղադրիչի աշխատածավալը կազմում է 50 կրեդիտ, իսկ հետազոտակա բաղադրիչի աշխատածավալը կազմում է 130 կրեդիտ: Ծրագիրը ներառում է դասընթացներ պրակտիկա, ինչպես նաև գիտահետազոտական բաղադրիչով նախատեսած հետազոտությա անցկացում, հետազոտության արդյունքների ամփոփում հոդվածների տեսքով, դրանց հրատարակում թեզի ձևակերպում և պաշտպանություն:

13. Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է: Ուսումնական գործընթաց կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային: Ուսանողին տարին մեկ անգա տրամադրվում է երկամսյա արձակուրդ:

14. Համալսարանը պարտավոր է ուսումնառության տարիներին ասպիրանտին ապահովե առնվազն 36 ժամ գիտամանկավարժական ծանրաբեռնվածությամբ:

III. Ծրագրի ուսումնական բաղադրիչի կազմակերպման ընթացակարգը

15. Համալսարանում Ծրագիրը իրականացվում է համաձայն բազային ուսումնական պլան (հավելված 1): Ուսումնական պլանը կազմվում է հետևյալ սկզբունքով. 180-80 = 100 կրեդիտ 1կիսամյակը=16 կրեդիտ (առկա), 1կիսամյակը=12.5 կրեդիտ (հեռակա), 1կիսամյակը=10 կրեդիտ (հայցորդություն):

16. Ծրագրի բազային ուսումնական պլանի բովանդակությունը պետք է ապահովի հետազոտողի տվյալ մասնագիտության ոլորտում անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների (կոմպետենցիաների) ձեռքբերմանը՝ ՀՀ որակավորումների ազգային շրջանակում ամրագրված հետազոտողի կրթական մակարդակի բնութագրիչների ձևավորման նպատակով:[8]

17. Ծրագրի բազային ուսումնական պլանը մշակվում է համապատասխան ամբիոնում՝ տվյա ասպիրանտի գիտական ղեկավարի կողմից՝ ամբիոնի վարիչի, առաջատար մասնագետների մասնակցությամբ: Ամբիոնի նիստին պլանի քննարկումից և անհրաժեշտ շտկումներ կատարելուց հետ այն համաձայնեցվում է գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ և քննարկվում ու հաստատվում է Համալսարանի գիտական խորհրդի նիստին:

18. Բազային ուսումնական պլանը գործում է 3 տարով՝ առկա ուսուցման դեպքում, 4 տարով հեռակա ուսուցման համար և 5 տարով՝ հայցորդության համար: Ուսումնական պլանի ձևաչափը ներկայացված է հավելված 2-ում (հեռակա ուսուցման պլանի տարբերակով):

19. Ուսումնական պլանի կրթական բաղադրիչը բաղկացած է պարտադիր (30 կրեդիտ) և ընտրով մասնագիտական պատրաստվածության դասընթացներից (20 կրեդիտ), պրակտիկաներից (10 կրեդիտ):

---

[8] «ՀՀ որակավորումների ազգային շրջանակ», հավելված ՀՀ կառավարության 2011թ մարտի 31-ի № 332-Ն որոշման:

20. Կրթական բաղադրիչում ներառված մասնագիտական պատրաստվածության [illegible] ցանկը տրամադրում է թողարկող ամբիոնը:

21. Եթե Համալսարանում հնարավոր չէ իրականացնել կրթական բաղադրիչում [illegible] դասընթաց, ապա դրա դասավանդումը պայմանագրային հիմունքներով կարելի է [illegible] բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտությունների [illegible] պայմանագրային հիմունքներով:

22. Համապատասխան ամբիոնը պարտավոր է ուսումնական տարվա սկզբին [illegible] բաժին ներկայացնել ուսումնական պլանի կրթական բաղադրիչով նախատեսված դասընթացների նկարագրությունը և մանրամասն օրացուցային պլանը՝ ըստ Համալսարանում ընդունված [illegible]:

23. Կրթական բաղադրիչներից և պրակտիկաներից ասպիրանտի/հայցորդի [illegible] ամփոփվում են ստուգարքների և քննությունների անցկացման միջոցով:
Քննությունները գնահատվում են 20-բալանոց համակարգով՝ համաձայն աղյուսակ 2-ի:

Աղյուսակ 2

Ասպիրանտուրայի (հայցորդության) համակարգում գնահատման սանդղակը

Գնահատման միավորը	*Գնահատականը*
18-20	«Գերազանց»
13-17	«Լավ»
8-12	«Բավարար»
0-7	«Անբավարար»
չն	«Չներկայացած»
ստ/չստ	«Ստուգված»/«Չստուգված»

IV. Ծրագրի հետազոտական բաղադրիչի կազմակերպման ընթացակարգը

25. Ուսումնական պլանի հետազոտական բաղադրիչը ներառում է ատենախոսության [illegible] գիտահետազոտական աշխատանքների անցկացում, արդյունքների ամփոփում, գիտական [illegible] տպագրություն (30 կրեդիտ), տարեկան ատեստավորումներ (20 կրեդիտ): Գիտահետազոտական աշխատանքների բովանդակությունը պայմանավորված է ատենախոսության ընտրված թեմայով տվյալ հետազոտության նորույթի, արդիականության ապահովմամբ: Այն [illegible] է ասպիրանտուրայի/հայցորդության ամբողջ ընթացքում:

26. Հետազոտական բաղադրիչից ասպիրանտի ձեռքբերումները [illegible] են համապատասխան թողարկող ամբիոնում տարեկան հաշվետվությունների, ինչպես նաև [illegible] թույլատրված գիտական ամսագրերում կամ ժողովածուներում ատենախոսության թեմայով [illegible] հոդվածների միջոցով:

V. Պրակտիկաներ

27. Ծրագիրը ներառում է գիտամանկավարժական և գիտահետազոտական [illegible] անցկացում:

28. Համալսարանում, այլ բուհում կամ որևէ հաստատությունում իր հիմնական մասնագիտությամբ աշխատող ասպիրանտը/հայցորդը իր ցանկությամբ ազատվում է գիտամանկավարժական պրակտիկայի անցկացումից: Նման դեպքերում ասպիրանտը/հայցորդը ներկայացնում է տեղեկանք իր հիմնական աշխատանքի վայրից:

29. Գիտահետազոտական պրակտիկա կարող է կազմակերպվել այն դեպքում, երբ ասպիրանտի/հայցորդի անհատական ուսումնահետազոտական պլանով նախատեսված է փորձարարական աշխատանքների իրականացում, ինչը հնարավոր չէ Համալսարանի պայմաններում: Նման դեպքերում պրակտիկան իրականացվում է համապատասխան հիմնարկության հետ պայմանագիր կնքելու միջոցով:

30. Գիտամանկավարժական պրակտիկան գնահատվում է 20-բալանոց համակարգով, գիտահետազոտական պրակտիկան՝ ստուգարքով (ստուգված/չստուգված):

VI. Տարեկան ատեստավորումներ

31. Տարեկան ատեստավորումները անցկացվում են թողարկող ամբիոններում՝ յուրաքանչյուր ուստարվա երկրորդ կիսամյակի ավարտին: Ասպիրանտի՝ ատեստավորման վերաբերյալ որոշումը ամբիոնի նիստի արձանագրության քաղվածքի ձևով ներկայացվում է ասպիրանտուրայի բաժին՝ ուսումնառության հաջորդ տարի նրան փոխադրելու/չփոխադրելու մասին զեկուցագիր ներկայացնելու և Համալսարանի ռեկտորի կողմից համապատասխան հրամանի համար:

32. Տարեկան ատեստավորում չանցած ասպիրանտը/հայցորդը հաստատության դեկանատի հրամանով ազատվում է ասպիրանտուրայից:

33. Համալսարանից հեռացված ասպիրանտը/հայցորդը կարող է վերականգնվել առնվազն մեկ կիսամյակ հետո՝ վճարովի հիմունքներով:

V. Ծրագրի եզրափակիչ ատեստավորումը

34. Մասնագիտական պրակտիկայի քննությունն անցկացվում է ԲՈԿ-ի թույլտվության ունեցող քննական հանձնաժողովի կողմից: Համալսարանի կամ այլ բուհի՝ համաձայն ԲՈԿ-ի համապատասխան կարգի:

35. Թեկնածուական ատենախոսության պաշտպանությունը իրականացվում է համաձայն ԲՈԿ-ի կողմից սահմանված կարգի: ԲՈԿ-ի դրական եզրակացությունից հետո ասպիրանտը/հայցորդը մեկ է բերում Ծրագրով նախատեսված 90 կredիտ:

36. Ատենախոսությունը չպաշտպանած ասպիրանտին/հայցորդին իր ցանկությամբ Համալսարանը անվճար տրամադրում է ակադեմիական տեղեկանք՝ ասպիրանտի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը Համալսարանի ռեկտորին ներկայացնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

VI. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄՆԵՐ

37.Սույն կարգը հաստատվում և դրանում փոփոխություններ են կատարվում Համալսարանի Գիտական խորհրդի կողմից:

38. Սույն կարգը ուժի մեջ է մտնում Համալսարանի Գիտական խորհրդի կողմից հաստատվելուց հետո:

39. Գիտական խորհրդի կողմից սույն կարգը հաստատելուց հետո ուժը կորցրած համարվեն հետևյալ փաստաթղթերը.

- «ՎՊՀ-ում ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ (ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ) ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ» ընդունված ՎՊՀ գիտխորհրդի նիստում արձանագրության թիվ 7, 24.09.2015թ,

- «ԿՐԵԴԻՏԱՅԻՆ [illegible] ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ. ՀԵՏԱԶՈՏՈՂԻ [illegible] ՕՐԱԳԻՐ», ընդունված ՎՊՀ գիտխորհրդի նիստում, արձանագրություն [illegible]

Հավելված 1

«Հաստատում եմ»
Գիտական աշխատանքների
գծով պրոռեկտոր, բգթ

_____ Ա.Սանթոյան
« » _____ 2020թ.

ԱՍՊԻՐԱՆՏԻ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԼԱՆ

Վանաձոր
2020թ.

ԱՍՊԻՐԱՆՏ

Ազգանուն, անուն, հայրանուն՝ _____

Ուսուցման ձևը՝ առկա հեռակա (ընգծել)

Մասնագիտություն՝ _____

Ատենախոսության թեման՝ _____

_____

_____

_____

Հաստատված է՝ _____

_____

_____

«_____ » _____ 20___թ.

արձանագրություն_____

Գիտական ղեկավար՝ _____

(ազգանուն, անուն, հայրանուն)

_____

(գիտական աստիճան և կոչում)

Գիտական ղեկավարի հիմնավորումը թեմայի ընտրության վերաբերյալ

Գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

Ասպիրանտի գիտաուսումնական պլանի կաղապար (հեռակա ուսուցում)

Ուսուցման ժամանակաշրջանը՝ 201..__ - 202..___

հ/հ	Աշխատանքի հակիրճ բովանդակությունը	Կրեդիտ	Կատարման ժամկետը	Ստուգման ձևը
	ԿՐԹԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ			
1.1.	Մասնագիտական օտար լեզու	4	1-ին կիսամյակ	Քննություն
1.2.	Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն	4	1-ին կիսամյակ	Քննություն
1.3.	Տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ	2	2-րդ կիսամյակ	Ստուգարք
1.4.	Կրթական նոր տեխնոլոգիաներ	2	2-րդ կիսամյակ	Ստուգարք
1.5.	Մասնագիտական պարտադիր դասընթաց-1	4	1-ին կիսամյակ	Քննություն
1.6.	Մասնագիտական պարտադիր դասընթաց-2	4	2-րդ կիսամյակ	Քննություն
1.7.	Մասնագիտական կամընտրական դասընթաց-1	4	3-րդ կիսամյակ	Քննություն
1.8.	Մասնագիտական կամընտրական դասընթաց-2	4	4-րդ կիսամյակ	Քննություն
1.9.	Կամընտրական դասընթաց	4	5-րդ կիսամյակ	Քննություն
1.10.	Գիտամանկավարժական պրակտիկա	10	3,5,6,7,8 կիսամյակներ	
1.11.	Մասնագիտական որակավորման քննություն	8	6,7-րդ կիսամյակներ	Քննություն՝ ԲՈԿ-ի կողմից հաստատված կարգով
	ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ			
2.1.	Ատենախոսության թեմային վերաբերող գրական տվյալների որոնման և համակարգման աշխատանք	2	2 –րդ կիսամյակ	Թեմային վերաբերվող գրական տվյալների վերլուծության ներկայացում
2.2.	Աշխատանք ատենախոսության թեմայով առաջին հոդվածի վրա	4	3-րդ կիսամյակ	Հոդվածի սնագիր տարբերակի ներկայացում, քննարկում
2.3.	Աշխատանք ատենախոսության թեմայով առաջին հոդվածի վրա	4	4-րդ կիսամյակ	Հոդվածի վերջնական տարբերակի ներկայացում մասնագիտական ամսագրում տպագրելու համար

2.4.	Աշխատանք ատենախոսության թեմայով երկրորդ հոդվածի վրա	6	5-րդ կիսամյակ	1.Հոդվածի սնագիր տարբերակի ներկայացում, քննարկում: 2.Հոդվածի վերջնական տարբերակի ներկայացում մասնագիտական ամսագրում տպագրելու համար:
2.5.	Աշխատանք ատենախոսության թեմայով երրորդ հոդվածի վրա	4	6-րդ կիսամյակ	1.Հոդվածի սնագիր տարբերակի ներկայացում, քննարկում: 2.Հոդվածի վերջնական տարբերակի ներկայացում մասնագիտական ամսագրում տպագրելու համար:
2.6.	Աշխատանք ատենախոսության թեզի ձևակերպման ուղղությամբ	5	7-րդ կիսամյակ	Թեզի գրական տվյալների վերլուծության և գիտահետազոտական (փորձարարական) աշխատանքնե-րի արդյունքների ձևակերպում, քննարկում
2.7.	Աշխատանք ատենախոսության թեզի ձևակերպման ուղղությամբ	5	8-րդ կիսամյակ	1.Թեզի սեղմագրի մշակում, քննարկում
2.8.	Ատենախոսության թեզի նախնական քննարկում	5	8-րդ կիսամյակ	Նախնական պաշտպանություն թողարկող ամբիոնում, պաշտպանության արդյունքներով որոշման կայացում տվյալ թեզի՝ համապատասխան գիտական խորհրդում պաշտպանության վերաբերյալ
2.9.	Տարեկան ատեստավորումներ	20	2,4,6,8-րդ կիսամյակներ	Ատեստավորման անցկացում համապատասխան

				ամբիոնում:

Ասպիրանտ՝ _____ « » ____2020 թ.

Գիտական ղեկավար՝ _____ « » ____2020 թ.

<u>*Հավելված 2*</u>

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր

____________________Ս.Թումանյան

"______" __________ 2020թ

Հաստատում եմ՝ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր

____________________Ա.Սանթրյան

"______" __________ 2020թ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝
Է.00.01 Հայոց պատմություն

Մասնագետի որակավորման աստիճանը՝ հետազոտող

Ուսման տևողությունը՝ <u>4 տարի</u>

Կրթության հիմքը՝ մագիստր, մասնագետ

Կրթության ձևը՝ հեռակա

Առարկայի անվանումը	Աշխատածավալ							Բաշխումն ըստ կիսամյակների								Ստուգում	
	Ընդհանուր		Լսարանային				ինքնուրույն	I	II	III	IV	V	VI	VII	VIII	ստուգարք	քննություն
	կրեդիտ	ժամ	դասախ.	գործն.	սեմինար	լաբոր.		18	18	18	18	18	18	18	18		
2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
Կրթական բաղադրիչ	50																
Պարտադիր դասընթացներ և քննություններ	20																
Մասնագիտական օտար լեզու	4	120		16			104	4									1
Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն	4	120	6	8			106	4									1
Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ	4	120		16			104		2	2						2,3	
Մասնագիտական պարտադիր դասընթաց-1	4	120	10		4		106	4									1

Մասնագիտական պարտադիր դասընթաց-2	4	120	10		4		106		4								2
Ընդամենը՝	**20**	**600**	**26**	**40**	**8**		**526**	**12**	**6**	**2**							
Պրակտիկա	**10**	**300**								**2**		**2**	**2**	**2**	**2**		
Ընդամենը՝	**30**	**900**	**26**	**40**	**8**	**0**	**526**	**12**	**6**	**4**	**0**	**2**	**2**	**2**	**2**		
Ընտրովի դասընթացներ և ստուգարքներ	**20**	**600**															
Մասնագիտական կամընտրական դասընթաց-1	4	120	10		4		106			4							3
Մասնագիտական կամընտրական դասընթաց-2	4	120	10		4		106				4						4
Կամընտրական դասընթաց	4	120	10		4		106					4					5
Մասնագիտական որակավորման քննություն	8	240											2	6			7
Ընդամենը	**20**	**600**	**30**	**0**	**12**	**0**	**318**	**0**	**0**	**4**	**4**	**4**	**2**	**6**	**0**		
Հետազոտական բաղադրիչ	**130**																
Ատենախոսության թեմայով հրատարակված հոդվածներ	**30**	900							2	4	4	6	4	5	5		
Տարեկան ատեստավորումներ	**20**	600							5		5		5		5		2,4,6,8
Ընդամենը՝	**50**	1500							**7**	**4**	**9**	**6**	**9**	**5**	**10**		
Ընդամենը, կիսամյակային կրեդիտ՝	**100**							12	13	12	13	12	13	13	12		
Ատենախոսություն և թեմա հաստատած հիմնարկի դրական եզրակացությունը ատենախոսության վերաբերյալ	**80**																
Ընդամենը, ծրագրային կրեդիտներ	**180**																